

4928

297 | 1884

B-4

2010

ԻՐՆԻՍՏ ԲԸՆԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎԻՏԵՆ

ԲՍԼԱՄԲՈՒԹԻՒՆՆ

ԵՒ

ՔԻՏՈՒԹԻՒՆԷ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՄԱՐԵԱԼ Դ ՍՕՌՊՕՆ 29 ՄԱՐՏԻ 1883



Թ Ի Ֆ Լ Ի Զ

ՅՈՒՀՈՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ ՏՊԱՐՈՆ

ՕՐԵՆԵՆ ՓՈՂՈՑ ՆՑ 5

1884

297

Բ-41

297.
P-51 W

ԷՐՆԻՍ ԲԸՆԱՆ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԻՆ

ԻՍԼԱՄՈՒԹՒՆՆ

ԵՒ

ԳԻՏՈՒԹՒՆԸ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԵԱԼ ԴԻ ՍՕՌՊՕՆ 29 ՄԱՐՏԻ 1883



001

Թ Ի Ֆ Լ Ի Զ

ՅՈՒՀԱՆՆԵՒ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐՐԵՒԵՆ ՓՈՂՈՑ N 5
1884



№

ՄԱՅԵՆԱԿԱՐԱՆ

260

БИБЛИОТЕКА

Никиты Осиповича

№ ЭМИНА. 138.

ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ.

9739



2014-50

Дозволено цензурою Тифлисъ, 16 Декабря. 1883 г.
 Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 5.

Ի Ս Լ Ը Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն

Ե Ի

Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Տիկնայք և Պարոնայք

Արդէն քանիցս ձեր ունկնդրացոյ ներողամիտ ուշադրութեան փորձն ըրած լինելով համարձակեցայ այսօր ևս ձեր առաջ ճառելու համար այնպիսի ամենափափուկ մի նիւթ ընտրել որ լի է նուրբ զանազանութեամբք: Պէտք է այդ նիւթի մէջ համարձակապէս մտնել եթէ կ'ուզեմք զպատմութիւնն անհաստատ իրողութիւններէ անջատել բոլորովին: Պատմութեան մէջ թիւրիմացութեանց միշտ պատճառ տուողն այն է՝ որ ազգերն և ցեղերն որոշող բառերն ճշտութեամբ չեն գործածուիր: Յունաց, Հռովմայեցոց և Արաբացոց վրայ կը խօսին, իբր թէ այդ բառերն մարդկային խումբեր նշանակէին որք միշտ նոյնն են մնացել չաւէտ, առ ոչինչ համարելով այն փոփոխութիւնք զորս կը կրեն նոքա՝ միջնորդութեամբ զինուորական յաղթութեանց, կրօնական և լեզուաբանական տիրապետութեանց, նորաձեւութեան և այն ամեն տեսակ հոսանքներու միջոցով որք մարդկային ազգին պատմութեան մէջ կը պատահին անդադար: Իրականութիւնն այսպէս պարզ դասակարգութեամբք չկառավարուիր: Մեք Քրանսացիքս, օրինակի համար, լեզուով Հռովմայեցի՝ քաղաքակրթութեամբ Յոյն՝ և կրօնքով Հրէայ եմք: Յեղական իրողու-

թիւնը, որ գլխաւորն է 'ի սկզբան' միշտ գնալով իւր կարեւորութիւնը կը կորուսանէ, երբ մարդկային ընտանիքի այս նախնական ցեղերու վրայէ կ'անցնին, զերդ փշրող մի գլան, այն ընդհանուր եղելութիւնք՝ որք յունական քաղաքակրթութիւն, հռովմէական աշխարհակալութիւն, գերմանական աշխարհակալութիւն, քրիստոնէութիւն, իսլամութիւն, վերածնութիւն, իմաստասիրութիւն, յեղափոխութիւն կը կոչուին և որք կը հարկադրեն զայնս առաւել կամ նուազ միաւորութեամբ ձուլիլ միմեանց հետ: Փափագելի է ինձ պարզել ձեզ հետ այս կարգէն եղող կարծեաց ամենէն սերտ շփոթութիւններէն մին. կ'ուզեմ խօսիլ այն անորոշ նշանակութիւն որ կ'ընծայեն արաբական գիտութիւն, արաբական իմաստասիրութիւն, արաբական արհեստ, մահմետական զիտութիւն, մահմետական քաղաքակրթութիւն բառերն: Այս կէտի նկատմամբ գոյացած անհաստատ գաղափարներն պատճառ կը լինին բազում ծուռ դատողութեանց, և մինչև անգամ խիստ ծանր սխալանաց 'ի գործնականն:

Նա որ փոքր ինչ տեղեակ է մեզ ժամանակակից եղելութեանց՝ յայտնապէս կը տեսնէ մահմետական երկիրներու այժմեան ստորացեալ աստիճանը, իսլամի ձեռօք կառավարուած Աշխարհաց անկումը, և մտաւոր աննշանութիւնն այն ցեղերու՝ որք մի միայն այլ կրօնէ կ'ընդունին իրենց մտաւոր մշակութիւնն և կրթութիւնը: Նոքա որք յԱրևելս կամ յԱփրիկէ ճանապարհորդած են, առանց բացառութեան ստուգած են զարմացմամբ՝ թէ որչափ մի ճշմարիտ հաւատացեալի միտքը գծնդակապէս տահմանափակեալ է, զիտած են այն մի տեսակ երկաթեայ շրջանակն որ նորա գլուխը սեղմած է, այնպէս որ սա բոլորովին փակեալ լինելով գիտութեան առաջ, անկարող է

մի բան ուսանելու կամ մի նոր գաղափարի մուտք տալու: Մահմետական մանուկն, տասն կամ տասներկու տարեկան եղած ժամանակ, նա որ ըստ բաւականի արթնամիտ էր գուցէ մինչև այն ժամանակ, երբ կը ծանօթանայ իր կրօնի հետ՝ յանկարծ այն օրէն կրօնամոլ կը լինի և մի տխմար գուռողութեամբ կը լեցուի կարծելով թէ բացարձակ ճշմարտութիւնն յայտնուած է իրեն: Նա երջանիկ է այն առանձնաշնորհութեան վրայ որ իւր ստորութեանն է առիթ: Այլ չլմար գուռողութիւնն է ահա մահմետականի արմատական մոլութիւնը: Իր կրօնի առ երևոյթս պարզութիւնը ուրիշ կրօնից համար մի անարդարանալի արհամարհանք կը ներշնչէ իրեն: Համոզուած լինելով թէ Աստուած ինչք և իշխանութիւն կը պարզէ որու որ կամի, առանց նկատողութեան առնելու ուսումն և անձնական արժանիքը, մահմետականը յետին ծայր կ'անարգէ ուսմունքը, գիտութիւնը, և այն ամեն ինչ որ եւրոպական ոգին կը կազմէ: Մահմետական կրօնի այս տուած ծայքը այնքան հաստատուն է՝ որ մի անձ երբ իսլամութիւնը կ'ընդունի՝ այլ ևս նորա համար ոչ ցեղի և ոչ սոցիալութեան զանազանութիւններն կը մնան: Պերպերն, Սուտանացին, Չերքեսն, Աֆղանն, Մալայցին, Եղիպտացին, Նուպիացին, երբ մահմետականութեան կը գառնան՝ ոչ ևս Պերպեր, Սուտանացի, Եղիպտացի և այլն են, այլ մահմետական: Պարսիկն միայն այս մասին բացառութիւն կը կազմէ, սոս միայն կարողացած է իւր ուրոյն առանձնաւորութիւնը պահել, վասն զի Պարսիկն կարողացած է իսլամութեան մէջ մասնաւոր մի տեղ սեպհակալանել իրեն: Նա իրապէս աւելի ձիւտ է քան մահմետական:

Չատերը կան որք մահմետականի մասին այս ընդհանրացեալ եղելութենէն յառաջ եկած անհաճոյ հետևու-

Թիւնը մեղմացնելու նպատակաւ՝ դիտել կը տան թէ այդ ան-
կումը կարելի է որ անցողական միայն լինի: Առքա ապագային
վրայ ապահով լինելու համար անցեալին կը դիմեն, ըսելով
թէ այդ մահմետական քաղաքակրթութիւնը, որ այնքան ին-
կած է այսօր, ժամանակաւ փայլուն էր շատ: Նա ունե-
ցեր է գիտունք և իմաստասէրք, և շատ դարեր Արև-
մտեան քրիստոնէից վրայ իշխեր է: Ե՞ր ինչ որ եղած է
պիտի չլինի կրկին: Ահա ճիշտ այս կէտն է որ կը փա-
փագիմ քննել ձեր առաջ: Եղած է լիրաւի մի մահմետա-
կան գիտութիւն, կամ զոնէ եղած է մի գիտութիւն իս-
լամէն ընդունուած, նորա թուրքապետութեանը հանդիպած:

Այս մասին մէջ բերուած իրողութեանց մի մասը ճշ-
մարիտ է լիրաւի: Այն, իբր 775 թուականէն մինչև տաս-
ներեքերորդ դարուն գրեթէ մէջտեղերն, այն է մերձ
500 տարի, մահմետական երկիրներու մէջ գիտունք և
նշանաւոր խորհողներ եղած են: Կարելի է մինչև անգամ
ըսել, թէ այդ միջոցին մէջ, մահմետական ժողովուրդն,
մտաւորական մշակութեան մասին, քրիստոնէայ ժողո-
վուրդներէն գերազանց է եղած: Բայց հարկ է այդ իրո-
ղութիւնը ուշի ուշով վերլուծել որպէս զի սխալ եզրակա-
ցութիւններու տեղի չտայ: Հարկ է դար դար Արևե-
լեան քաղաքակրթութեան պատմութեանը հետևիլ տես-
նելու համար թէ ո՞րք են այն զանազան տարերք որք
այս աւժամանակեայ գերազանցութիւնը յառաջ բերին, և
թէ ինչպէս սա ընդհուպ յոյժ յայտնի մի ստորնութեան
փոխուեցաւ:

Մահմետականութիւնն, իր գոյութեան առաջին դա-
րուն մէջ, կատարելապէս օտար է իմաստասիրութիւն կամ
գիտութիւն անուամբ կոչուած բաներուն: Արաբիան շատ
դարերէ ՚ի վեր կրօնական վէճերու ասպարէզ եղած է և

արաբին համոզումը այս պատճառաւ այլ և այլ սեմական
միաստուածութեանց մէջ առ կախ մնացած է, հետևա-
պէս իսլամը հազար մղոն հեռու է այն ամեն բաներէ որք
բանաւորականութիւն կամ գիտութիւն կը կոչուին: Արա-
բացի հեծեալք որք այդ կրօնի միացան, վասն զի վստահ
զիտէին թէ այդ պատրուակաւ պիտի կարողանան տիրել
և կողոպտել, աշխարհիս ամենէն քաջամարտիկներն եղան
իրենց ժամանակին: Բայց տարակոյս չկայ որ սոքա
մարդկանց մէջ լետին իմաստասէրներն էին: Տասներեքե-
րորդ դարու մի Արևելցի հեղինակ, Ապուֆերաճ, հետևեալ
կերպով կը նկարագրէ արաբ ժողովուրդի յայտական բը-
նութիւնը. «Այս ժողովրդեան գիտութիւնն էր, կ'ըսէ, լե-
զուի գիտութիւնն, սորա յատկաբանութեանց ծանօթու-
թիւնը, ոտանաւորներու կազմակերպութիւնը, արձակին
ճարտար շարագրութիւնն . . . : Այդ գիտութեամբն էր որ
կը պարծէր նա: Իսկ իմաստասիրութեան նկատմամբ,
Աստուած ոչինչ ցոյց տուած էր իրեն և զայն նմա ըն-
դունակ չէր ըրած»: Հատ ճշմարիտ են այս խօսքեր: Թա-
փառական Արաբացին, որ ամեն մարդերէ աւելի ծանօթ
է զպրութեանց, ամեն մարդերէ ևս նուազ միատիկեան
է, նուազ մտախորհութեան հակամիտեալ է: Բարեկրօն
Արաբն, իրաց մեկնութիւն տալու համար, կը բաւականա-
նայ ընդունիլ որ մի ստեղծիչ Աստուած կայ, ուղղակի
զաշխարհն կառավարող, որ հետզհետէ Մարգարէից ձե-
ռօք ինքզինքը յայտնած է մարդկանց: Այսպէսով ցորջափ
իսլամն արաբի իշխանութեան ներքև մնաց, այն է ա-
ռաջին չորս խալիֆներու և Օմէյյադներու ժամանակ, բնաւ
աշխարհական մի բնութիւն մենցող մտաւորական շար-
ժում տեղի չունեցաւ իւր մէջ: Էօմէր Ադէքսանդրիոյ զրա-
տունն չէ այրած, ինչպէս ստէպ կը կրկնեն շատերն: Նորա

օրովն այդ գրատունն գրեթէ ոչնչացած էր արդէն: Բայց Էօմէրի աշխարհիս վրայ յաղթող հանդիսացուցած ըսկբունքն իրօք քանդիչն էր գիտական խուզարկութեանց և մտքի զանազան երկանց:

Երբ 750 թուականին մօտ, Պարսիկն յաղթող ելաւ և Ապպասի ցեղն Պէն-Օմէյյաի ցեղին յաջորդեց՝ ամենայն ինչ կերպարանափոխ եղաւ: Իսլամութեան կեդրոնը Տիգրիսի և Եփրատայ կողմերը փոխադրուած գտնուեցաւ: Արդ՝ այդ աշխարհն տակաւին կը կրէր այն քաղաքակրթութեան լետքերն որու նմանը սակաւ փայլած է Արևելքի մէջ, այն է Սասանեան Պարսկաց քաղաքակրթութիւնը՝ որ Խոսրով Նուշիրվանի օրով իր գագաթնակէտն հասած էր: Իմաստասիրութիւնն Կոստանդնուպօլսէ հալածուելով եկած ՚ի Պարսիկս ապաստանած էր: Խոսրով Հնդկաց զրքերն թարգմանել տուաւ: Նեստորական քրիստոնեայք, որք ժողովրդեան ամենէն կարևոր տարրը կը կազմէին, քաջ հմուտ էին գիտութեանց և յունական իմաստասիրութեան: Ամբողջ բժշկականութիւնը նոցա ձեռքն էր: Նոցա եպիսկոպոսունք տրամաբան էին և երկրաչափ: Պարսկական գիւցագներգութեանց մէջ, որոց տեղական երանգն սասանեաց ժամանակներու ընդօրինակութիւնն է, երբ Ռիւսդէմ մի կամուրջ կ'ուղէ կառուցանել, իբր ճարտարապետ մի շահալի (կաթողիկոս, որ նեստորական եպիսկոպոսաց տիտղոսն է) բերել կը տայ:

Իսլամութեան ահարկու քամին յանկարծ կասեցուց, հարկւր տարւոյ չափ, իրանական այդ գեղեցիկ զարգացումը: Բայց Ապպասիտներու գահակալութիւնը կարծեք Խոսրովներու ժամանակին փայլին վերածնութիւնն եղաւ: Այն լեզափոխութիւնն որ այս վերջին ցեղը կրկին ՚ի գահ բարձրացուց՝ պարսիկ գունդերով, պարսիկ հրամանատար-

ներու ձեռօք կատարեցաւ: Նորա Հիմնադիրներն, Ապիւ-Ապպաս և մանաւանդ Մանուր միշտ Պարսիկներով շրջապատեալ էին: Սոքա կերպիւ իւրիք սասանեանք են վերստին կենդանացած: Մտերիմ խորհրդականք, արքայորդոց ուսուցիչք, առաջին նախարարք Պարմեկիտներ են հին պարսիկ ցեղէ, որք յոյժ լուսաւորեալ լինելով՝ ազգային կրօնին հաւատարիմ մնացած էին, այն է զրադաշտութեան, և որք խիստ ուշ մահմետականութիւնն ընդունեցին այն ևս առանց ներքին համոզման: Նեստորականք քիչ վերջը այդ թերահաւատ խալիֆներու շուրջը բոլորեցան և գրեթէ մասնաւոր մի առանձնաշնորհութեամբ՝ նոցա առաջին բժիշկներն եղան: Մի քաղաք որ մարդկային մտաց պատմութեան մէջ բոլորովին յատուկ մի գեր ունեցած է, Հարան քաղաքը, հեթանոս մնացած էր և հին յունաց գիտական աւանդութիւններն ամբողջապէս պահած էր: Հարան այդ նոր գպրոցին մեծապէս օժանդակեց տալով նմա բազմաթիւ գիտուններ, բայց մանաւանդ աստղագէտներ որք յայտնեալ կրօնին չէին պատկաներ:

Այդ վերածնեալ Պարսկաստանի իբր մայրաքաղաքն բարձրացաւ Պաղտատ: Յաղթողի լեզուն, արարբերէնն, շարունակեց տիրել. նոյնպէս և կրօնքն չուրացան բոլորովին: Բայց այդ նոր քաղաքակրթութիւնն իսկապէս խառն եղաւ: Փարսիներու և քրիստոնէից մնաց վերջնական յաղթութիւնն. Վարչութիւնն, բայց մանաւանդ ոստիկանութիւնն, քրիստոնէից ձեռքն անցաւ: Բոլոր այն նշանաւոր խալիֆք, որք մեր Քարլովէնթեանց ժամանակակից են, Մանուր, Հարուն-էլ-Ռաշիտ, Մամուն, հազիւ թէ մահմետական են: Արտաքուստ կը պաշտէին այն կրօնը որու գլուխն, պապն էին, եթէ ներելի է այսպէս

խօսիլ, բայց նոցա միտքն ուրիշ տեղ էր: Նոքա ամեն իրաց հետաքրքիր են, մանաւանդ օտար և հեթանոս իրաց, և Հնդկաստանի, Հին Պարսկաստանի, մանաւանդ Յունաստանի կը դիմեն ուսանելու համար: Իրաւ է, որ երբեմն բարեպաշտօն մահմետականք տարօրինակ յեղաշրջմունք կը մուծանեն յարքունիս, իրաւ է որ, մերթընդ մերթ, խալիֆն բարեպաշտ կը դառնայ և ՚ի զոհ կը մատնէ իւր անհաւատ և ազատախօհ բարեկամներն, բայց յետոյ անկախութեան շունջը յաղթող կը հանդիսանայ վերստին և խալիֆն կրկին իւր մօտ կը կոչէ իւր գիտուններն և իւր զբօսանաց ընկերներն և ազատ կեանքն կը վերսկսի, ՚ի մեծ գալթակղանս մաքրակրօն մահմետականաց:

Ահաւասիկ այս է Պաղտատի այդ հետաքրքրական և յանկուցիչ քաղաքակրթութեան մեկնութիւնը, որու ուրուագիծն ամեն երևակայութեանց մէջ սպաւորուած կայ ՚ի շնորհս Հալիֆէ Գիշրիէն վէպերուն: Այդ քաղաքակրթութիւն մի խառնուրդ է պաշտօնական խրատակրօնութեան և ծածուկ թուլտուութեան, տարիք երիտասարդութեան և անհետևութեանց, ուր լուրջ արհեստք և արհեստք խրախճան կենցաղի՝ միասին կը ծաղկին, շնորհիւ տիրողաց պաշտպանութեան, որք մի մոլեռանդ կրօնի անհաւատ գլուխներն են, ուր ազատախօհն, թէպէտ միշտ դժնդակ պատժոց սպառնալեաց ներքև, սակայն կ'ընդունուի և կը պատուասիրի յարքունիս: Այս խալիֆներու իշխանութեան օրով, որք մերթ ներողամիտ, մերթ յակամայս հայածիչ էին, ազատախօհութիւնն զարգացաւ: Մահմետէն կամ «վիճաբանողք» նիստեր կ'ընէին ուր ամեն կրօնք քննութեան կ'առնուէին յառաջի բանավարութեան: Այդ նիստերու գրեթէ մի ատենագրութիւնն

ունինք որ մի կրօնամոլ անձի ձեռք խմբագրուած է: Ներեցէք որ կարգամ ձեզ, ինչ կերպով որ պ. Գօզի թարգմանած է զայն:

Քայրուանի վարդապետներէն մին կը հարցնէ սպանիացի մի բարեպաշտ աստուածաբանի, որ Պաղտատ եկած էր, թէ այդ քաղաքի մէջ գտնուած ժամանակ ներկայ գտնուած է երբէք Մահմետէն նիստերուն: «Երկու անգամ գտնուած եմ, կը պատասխանէ սպանիացին, բայց այնուհետև մեզք համարած եմ դառնալ անդ կրկին: — Ի՞նչ պատճառաւ կը հարցնէ խօսակիցը — Պատմեմ և դուք ինքեանքդ գատեցէք: Առաջին գտնուած նիստիս, ոչ միայն ամեն տեսակ ուղղափառ և այլափառ մահմետականներ կը գտնուէին, այլ նաև այլահաւատք, կրակապաշտք, նիւթապաշտք, անհաւատք, հրէայք և քրիստոնեայք, ՚ի մի բան ամեն տեսակ թերահաւատք ներկայ էին այնտեղ: Ամեն աղանդ իր մեծն ունէր որու պաշտօնն էր իւր դաւանած կարծիքները պաշտպանելու: Ամեն անգամ որ այս մեծերէն մին ժողովատեղին կը մտնէր՝ ամենքն ոտքի կ'ելնէին ՚ի նշան յարգանաց: Ոչ ոք իւր տեղը կը նստէր կրկին մինչև որ այդ մեծը չբազմէր: Սրահն շուտով լեցուեցաւ և երբ տեսան թէ ամենքն ներկայ են, թերահաւատներէն մին խօսք առաւ և ըսաւ. «Մեք ժողոված եմք այստեղ տրամախորհելու համար: Գուք, մահմետականքդ, պէտք չէ որ ձեր զրքերէն վկայութիւններ մէջ բերելով կամ ձեր մարգարէին հեղինակութեան վրայ լինելով ճառէք, վասն զի մեք ոչ միօրն կը հաւատամք և ոչ միւսին: Պէտք է որ ամեն ոք բանավարութեան մէջ որոնէ իւր պատճառաբանութիւններն»: Ամենքն « ծափահարեցին այս խօսքերուն: Կը մակաբերէք, յարեց սպանիացին, որ այսպիսի խօսքեր լսելէս վերջը, այլ

« Լս չգնացի այդ ժողովին: Յոյց տուին. ինձ մի ուրիշ
« ժողով ևս որ այցելեմ, բայց այն ևս միևնույն գալթակ-
« ղեցուցիչ տեսարանը կ'ընծայէր»:

Այս ուղղափառ խստութեան համարքայլ ընթացքին
մի կատարեալ իմաստասիրական և գիտական շարժում
յաջորդեց հետևաբար: Ասորի քրիստոնեայ բժիշկը, որք
յունական վերջին դպրոցներուն շարունակիչներն էին, շատ
հմուտ էին պերիպատիկեան իմաստասիրութեան, ինչպէս
նաև չափազիտութեան, բժշկութեան և աստղաբաշխու-
թեան: Խալիֆք սոցա ջանիւք Արիստոտէլի համայնագի-
տական մատեանն, Եւկլիտէսն, Գաղղիանոսն և Պտղոմէոսն
արաբերէնի թարգմանել տուին, ՚ի մի բան ամեն ինչ որ
յունական գիտութեան սեպհականութիւնն էր այն ժա-
մանակ: Գործօն մտքեր, ինչպէս էր Ալկիմտին, սկսան
խոկալ այն յաւիտենական խնդրոց վրայ զորս մարդ կ'ա-
ռաջարկէ ինքզինքին առանց կարողանալ լուծելու: Սոցա
Քիլոփ-Ք (Քիլոփոս) անունը տուին, և այն օրէն այս օտա-
րամուտ բառը վատ մի նշանակութիւն ստացաւ իբր թէ
խլամութենէ դուրս մի բան նշանակող: Քիլոփ-Ք բառն
մահմետականաց համար մի զարհուրելի յորջորջանք դար-
ձաւ, շատ անգամ մահաբեր կամ հալածանաց ենթար-
կող, ինչպէս զէնփի՛ն անունը և աւելի վերջը Քարմաստն
(ազատ-որմնագիր) բառը: Պէտք է խոստովանիլ թէ այս
եղանակաւ ամենակատարեալ բանաւորականութիւնն էր որ
գոյութիւն կ'առնուր իսլամութեան ծոցը: Մի տեսակ ի-
մաստասիրական ընկերութիւն որ ինփան-էս-սաֆա «ան-
կեղծութեան եղբարք» կը կոչուէր, սկսաւ մի իմաստասի-
րական համայնագիտակ մատեան իմբարբել, որ իւր ի-
մաստութեամբն և զաղափարաց բարձրութեամբը նշանա-
ւոր է: Երկու յոյժ ականաւոր անձինք, Էլֆարապի և Ա-

վիսէն, քիչ ժամանակի մէջ ամենակատարեալ խորհողաց
կարգը անցան և որոց նմանը դեռ մինչև այն ժամանակ
չէր տեսնուած: Աստղաբաշխութիւնն և գրահաշիւն, նը-
շանաւոր կերպով զարգացան, մանաւանդ ՚ի Պարսիկս:
Քիմիագիտութիւնն իւր ստորերկրեայ երկար աշխատու-
թեան կը յարատուէ, և իր ապշեցուցիչ հետեւութիւննե-
րովն ցոյց կը տայ ինքզինքը արտաբուստ, ինչպէս են
թորման և զուցէ իսկ վառօդի գիւտերն: Արևելքէն յետոյ
մահմետական Սպանիան կ'սկսի ինքն ևս այս ուսումնե-
րով զբաղիլ և այս մասին Հրէայք մեծապէս կ'օժանդա-
կեն նոցա: Իպն-Պաճա, Իպն-Տօֆայլ, Ավէրօէս, տաս-
ներկուերորդ դարուն իմաստասիրական միտքն այնպիսի
բարձրութեանց կը հասցունեն, ուր ՚ի սկզբանէ հետէ եր-
բէք չէր հասած նա:

Ահա այս է այն իմաստասիրական մեծ բովանդակութիւնն
որ սովորութիւն եղած է արաբական անուանել, վասն զի
նորա վերաբերեալ գրեանք արաբերէն գրուած են, բայց էս-
պէս յունա-ասսանեան է: Աւելի ճիշտ կը լինի ըսել թէ յունա
կան է, քանզի սորա ամենէն արդասաւոր տարերքն Յունաս-
տանէն եկած էր: Նոյն անկման ժամանակներու մէջ, մարդն
իր հին Յունաստանի վրայ ունեցած հմտութեանը համեմատ
արժէք ունէր: Յունաստանն էր միակ աղբիւր գիտութեան
և ուղղամտութեան: Ասորեստանի և Պաղտատի լատին Ա-
րևմուտքի վրայ ունեցած գերազանցութեան մի միակ
պատճառն այն էր՝ որ առաջինք խիստ աւելի մօտ էին
յունական աւանդութեանց քան վերջինն: Աւելի դիւրին
էր մի Եւկլիտէս, մի Պտղոմէոս, մի Արիստոտէլ ունենալ ՚ի Հա-
րան, ՚ի Պաղտատ քան ՚ի Բարիդ: Ահ, եթէ բիւզանդեանք
աւելի նուազ չարակնոտ աչօք պահպանէին այն գանձերն
որ նոյն միջոցին չէին կարգար անգամ, եթէ ութերորդ

կամ իններորդ դարերու մէջ Բէսարիոնք և Լասկարիսներ գտնուէին, երբէք Հարկ չէր մնար այն տարօրինակ պրտոյտին որով գիտութիւնն տասներկուերորդ դարու մէջ Հասաւ մեզ, Ասորեստանէն, Պաղտատէն, Աորդովաչէն և Տօլէդէն դառնալով: Բայց զաղտնի նախախնամութեան նման մի բան կալ որ երբ մի ժողովրդեան ձեռաց մէջ մարդկային մտաց ջաշը այն ինչ պիտի մարի, մի ուրիշն կը գտնուի այնտեղ զայն վեր առնելու և կրկին վառելու համար: Նա էր որ գործոյն առաջնակարգ մի արժէք տուաւ, ապա թէ ոչ կորուսեալ պիտի մնար սա խեղճ Ասորեստանցոց, Հալածեալ Քիչ-Քներու և Հարանացոց ձեռաց մէջ, որոց թերահաւատութիւնն պատճառ էր նոյն ժամանակի մարդկանց առաջ դատապարտեալ մնալու: Յունաց զիտական և իմաստասիրական գրքերու արբերէն թարգմանութեանց շնորհիւն է ուրեմն որ Եւրոպան նախնեաց աւանդութեանց խմորն ստացաւ որ անհրաժեշտ էր իւր հանճարի բողբոջելուն:

Արդարև, մինչդեռ Ավերօէս, որ արաբացի վերջին իմաստասէրն է, կը մեռանէր ՚ի Մարօք, տիւր և լքեալ, մեր Արևմուտքն կը զարթնուր բոլորովին: Արէլար արդէն նորածնեալ բանաւորականութեան ճիչն արձակած էր: Եւրոպան իր ոգին գտած էր և կ'սկսէր այն տարաստվոր լեզափոխութիւնն կատարել, որ ՚ի վերջէ մարդկային մտաց կատարեալ ազատութեան պիտի յանգէր: Այստեղ, ՚ի Բարիզ, Սրբուհույն Գենովարէ լեռան վրայ, մտաւոր աշխատութեանց համար մի նոր կեդրոն կը հիմնուէր: Մի բան միայն կը պակսէր, այն էր գիրքերն, հնութեան հարազատ աղբիւրներն: Այնպէս կը թուի ՚ի սկզբան թէ աւելի բնական էր գնալ առնել զօչնս Կ. Պօլսոյ գրատուններէն, ուր բնագիրները կը գտնուէին, քան զիմել շատ

անգամ պակասաւոր թարգմանութեանց այնպիսի մի լեզուով որ բնաւ ընդունակ չէ յունական մտածութիւններն ճշտիւ արտայայտելու: Բայց կրօնական վէճերը լատին աշխարհի և յունական աշխարհի մէջ մի աղետալի հակակրութիւն գոյացուցած էին: 1204-ի չարաբեր խաչակրութիւնն առաւել ևս սաստկացուցած էր այդ հակակրութիւն: Եւ դարձեալ մեր մէջ Հելլենագէտք չկային և տակաւին երեք հարիւր տարի պէտք էր սպասել մինչև որ մի Լրֆէվր տ'Էդապլ, մի Պուդէ ունենայինք:

Առ ՚ի չգոյէ ճշմարիտ և վաւերական յոյն իմաստասիրութեան, որ բիւզանդեան դրատանց մէջ էր, Եւրոպացիք զնացին ուրեմն Սպանիա վատ թարգմանուած և խարդախեալ յունական մի գիտութիւն ստանալու: Հարկ չէ խօսիմ ձեզ Կէրէրդի վրայ, որու մահմետականաց մէջ ըրած ճանապարհորդութիւնները յոյժ կասկածաւոր են: Բայց տաննէկերորդ դարուն սկիզբէն, Ափրիկեցի Կոզանդիանտոն իւր ժամանակակից հայրենակիցները կը գերազանցէ հմտութեան մասին, վասն զի մահմետական կրթութիւն ստացած է նա: 1130-էն մինչև 1150, մի գործօն դպրոց, որ Տօլէդ Հաստատուած է Ռէյմօն արքեպիսկոպոսի պաշտպանութեան ներքև, արաբական գիտութեան ամենէն կարևոր գրքերն լատիներէնի կը թարգմանէ: Տասներեքերորդ դարու առաջին տարիներէն իսկ, արաբերէն Արիստոտէլը յաղթանակաւ կը մտնէ Բարիզի համալսարանի մէջ: Արևմուտքն իւր չորս կամ հինգ հարիւր տարուան ստորութիւնը կը թոթափէ: Մինչև այն օր Եւրոպան զիտականապէս մահմետականաց հարկատուն եղած էր: Տասներեքերորդ դարուն մէջտեղերն, տակաւին նժարներն անորոշ են: Գրեթէ 1275-էն սկսելով, երկու հակառակ շարժում յայտ յանդիման կ'երևին: Մի կողմէ

մահմետական երկիրներն մտաւորական ամենատխուր անկ-
մամբ կը խորատուզին: Միւս կողմէն Արեւմտեան Եւրոպան
Հաստատապէս և իւր Հաշուոյն Համար գիտական միջոցնե-
րով ճշմարտութիւնը խուզարկելու ճանքուն մէջ կը մտնէ,
ճանապարհ ուր ահագին կորին լայնոյթն տակաւին Հնար
չէ չափել:

Այն ալն մարդուն որ մարդկային յառաջագիմութեան
անօգուտ է: Գրեթէ անմիջապէս կորուսեալ է նա: Արա-
բական կոչուած գիտութիւնը իւր կենսական ծիլն լատին
Արեւմուտքին պատուաստելէն յետոյ՝ կ'աներևութանայ:
Մինչդեռ Ավերօէս լատին դպրոցներու մէջ գրեթէ Արիս-
տոտէլի հաւասար Համբաւ կ'ստանայ՝ իր կրօնակիցներու
մէջ կը մոռցուի: Գրեթէ 1200 թուականէն վերջը ոչ մի
Համբաւաւոր արաբ իմաստասէր կայ: Իմաստասիրութիւնը
միշտ իսլամէն հալածուած էր, բայց այնպիսի մի եղանա-
կաւ որ զայն ոչնչացնելու չէր յաջողած: 1200-էն սկսե-
լով աստուածաբանական յետաշրջումը բոլորովին յաղթող
կը կանգնի: Իմաստասիրութիւնը մահմետական երկիրնե-
րու մէջ ջնջուած է: Պատմաբանք և բազմաճառք նորա
վերայ կը խօսին իբր մի յիշատակութիւն և մի վատ յի-
շատակութիւն: Իմաստասիրական ձեռագիրք կը ջնջուին
և հագուազիւտ կը լինին: Աստղաբաշխութեան թույ-
տուութիւն կ'ընեն մի միայն իւր ալն մասին նկատմամբ՝ որ
ազօթից ուղղութիւնը որոշելու կը ծառայէ: Քիչ վերջը
թուրք ցեղը մահմետականին հեգեմոնութեան պիտի տի-
րանայ և ամեն կողմ իմաստասիրական և գիտական գո-
ղափարաց չգոյութիւնը պիտի յաղթանակել տայ քանզի
գուրկ է անոնցմէ: Այն օրէն սկսելով, և հաղիւ մի քանի Հա-
գուազիւտ բացառութեամբք, ինչպէս է Իպն-Նալդուն, մահ-
մետականաց մէջ ոչ մի ազատ և լայն խորհող պիտի գտնուի:

Իսլամութիւնն իւր ճոցին մէջ խեղդած սպաննած է
զգիտութիւն և զիմաստասիրութիւն:


Չուզեցի երբէք, Պարոնայք, նուազացնել արաբական
կոչուած այն մեծ գիտութեան դերը որ մարդկային մտաց
պատմութեան մէջ այնքան կարևոր մի քայլ է: Նորա
մի քանի մասանց մէջ ունեցած ինքնագիւտ հեղինակու-
թեան մասին չափազանցութեամբ խօսուած է, մանաւանդ
աստղաբաշխութեան նկատմամբ: Պէտք չէ սակայն Հա-
կաուսի ծայրահեղութեան մէջ իջնիլ չափէն աւելի տըթ-
դնելով զայն: Վեցերորդ դարուն մէջ, հին քաղաքակրթ-
ութեան աներևոյթանալուն և տասներկուերորդ և
տասներեքերորդ դարերուն եւրոպական ողուոյն ծնանելուն
մէջ, մի միջոց կայ որ արաբական շրջան կարելի է ա-
նուանել, որ ատեն մարդկային մտաց յառաջագիմութեան
աւանդութիւնը իսլամաց տիրապետած երկիրներու մէջ
մնացած է: Այդ գիտութիւնը, որ արաբական կ'անուանեն,
ինչ ունի իսկապէս արաբական: Լեզուն, մի միայն լեզուն:
Մահմետականաց յաղթութիւններն մինչև աշխարհիս յե-
տին սահմանները տարած էին Հէճաղի լեզուն: Ինչ որ
պատահած է լատինին, նոյնը պատահեցաւ և արաբացիին:
Լատինն, Արեւմուտքի մէջ այնպիսի զգացմանց և մտա-
ծութեանց արտայայտողն եղաւ որք Լատիոմի հետ ոչ մի
առնչութիւն ունէին: Ավերօէս, Ավիսէն, Ալբատէնի արա-
բացի են, ինչպէս Մեծն Ալբերտ, Ռօմէ Պաքրն, Փրան-
սուա Պաքրն, Սպինօզա Լատին են: Նոյնչափ մեծ թիւ-
րիմացութիւն է արաբական գիտութիւնն և իմաստասի-
րութիւնը Արաբիոյ Հաշուոյն գրել, որքան Հուովմի վերագրել
բոլոր լատին քրիստոնեայ մատենագրութիւնն, բոլոր սքօլաս-
տիքեանք, բոլոր Վերածնութիւնն, բոլոր տասնևվեցերորդ
և մասամբ տասնևեօթներորդ դարերու գիտութիւնը,

վասն զի սոքա ամենքն լատին լեզուաւ զրուած են: Եւ լիրաւի, զիտելու խիստ արժանի կէտն այն է թէ արաբացի կոչուած զիտնականաց մէջ, մի միայն մի անձ կալ, Ալկինտին, որ ծննդեամբ արաբացի լինի: Միւս ամենքն Պարսիկ, Անդրառիական, Սպանիացի են, կամ Պուլարայի, Սմրղանդի, Կորդովայի և Սելվիլիոյ մէջ ծնած: Ոչ միայն սոքա սերնդով Արաբացի չեն, այլ և ոգւոյ մասին անգամ արաբացւոց չեն նմանիր: Արաբերէն լեզուն կը գործածեն թէպէտ, բայց սա ևս կը նեղացնէ զայնս, ինչպէս միջին դարու խորհողք լատիներէնէ կը նեղուին և իրենց գործածութեանը համեմատ մի ուղղութիւն կը տան նմա: Արաբերէն լեզուն որ այնքան յարմար է բանահիւստութեան և մինչև մի աստիճան պերճախօսութեան, խիստ անյարմար մի գործի է բնագանցութեան համար: Արաբացի իմաստասէրք և զիտնականք ընդհանրապէս շատ ճախող զրազէտներ են:

Այդ զիտութիւնն արաբացի չէ ուրեմն: Բայց մահմետական է գոնէ: Իսլամութիւնն այդ բանաւոր խուզարկութեանց մասին մի պաշտպանական օգնութիւն ըրած է արդեօք: Ո՛հ, բնաւ ոչ մի կերպիւ: Այդ ուսումնասիրական հոյակապ շէնքն ամբողջովին զրազաշտականաց, քրիստոնէից, հրէից, հարանացւոց և իմայելականաց գործն է, նոյնպէս և այն մահմետականաց որք ՚ի ներքուստ իրենց կրօնքին դէմ ապստամբ կը գտնուէին: Այդ շէնքն ուղղափառ մահմետականներէն անէծք միայն ընդունած է: Մամուն խալիֆն, որ ամեն խալիֆներէ աւելի ջանք ցոյց տուաւ յունական իմաստասիրութիւնը ներմուծելու համար, անխնայ կերպով դատապարտեցաւ աստուածաբաններէն: Նորա իշխանութեան ժամանակ պատահած արդէտից պատճառ՝ նորա իսլամութեան օտար վարդապետու-

թեանց ըրած թողտուութիւնն է, ըսին: Չատ անգամ կը պատահէր, որ իմամներու զրգմամբ ժողոված խաթամութիւն հաճոյանալու համար, հրապարակներու վրայ իմաստասիրական կամ աստղաբաշխական գրքերը կ'այրէին կամ ջրհորներու, կիստեռներու մէջ կը նետէին: Նոքա որք այս ուսումներով կը պարապէին, ~~դէտի~~ (անկրօն) կ'անուանէին, փողոցներու մէջ կը գանակոծուէին, տուներնին կ'այրուէր և շատ անգամ պաշտօնատարք, ժողովրդեան հաճելի լինելու համար, սպաննել կը տալին զայնս:

Ուրեմն իրօք իսլամութիւնն զգիտութիւն և զիմաստասիրութիւնն հալածած է միշտ և հուսկ ուրեմն խեղդած է զայնս: Միայն թէ այս նկատմամբ պէտք է երկու շրջան որոշել իսլամի պատմութեան մէջ: Մին իւր սկզբնաւորութենէն մինչև տասներկուերորդ դարը, միւսն տասներեքերորդ դարէն մինչև մեր օրերը: Առաջին շրջանի մէջ, իսլամութիւնն ազանդաւորներէ ծիրեալ՝ և մի տեսակ բողոքականութեամբ (Ֆեաղուլէ-Ֆա-Է-Է-Է կոչուածն) բարեխառնեալ, այնչափ կազմակերպեալ և այնչափ մոլեռանդ չէ որչափ որ եղաւ նա երկրորդ շրջանի մէջ, երբ նա թաթար և պերպեր ցեղերու ձեռքն ինկաւ, ցեղեր որք զանդաղ, զազանաբարոյ և անհանճար են: Իսլամութիւնն նշանաւոր է՝ մանաւանդ այն յատկութեամբ որ իրեն յարողներն ևս քան զևս առաւել հաւատացեալ կարողացել է ընել: Առաջին արաբացիք որք այս շարժման մէջ մտան՝ հազիւ թէ Մարդարէին առաքելութեանը կը հաւատային: Երկու կամ երեք տարու տեւողութեան ժամանակ թերահաւատութիւնն հազիւ թէ ինքզինքը կը ծածկէ: Յետոյ կը դալ վարդապետութեան բացարձակ տիրապետութիւնն, ուր անկարելի իմն է բաժանել իրարմէ հոգևորն և աշխա-



րայինն, տիրապետութիւն բռնադատիչ որ մարմնական պատիժներ կը տնօրինէ կրօնական կիրառութեան անխոյժ գրտնուողին, մի գրութիւն վերջապէս, որ հարստահարութեանց մասին հաղիւ հաղ հաւասարել է իրեն սպանեկան հաւատաքննութիւնը: Երբէք ազատութիւնն այնքան հարուած չը կրէր քան մի ընկերական կազմակերպութեան ձեռօք, ուր վարդապետութիւնն բացարձակապէս կ'իշխէ և կը տիրապետէ քաղաքական կենաց վրայ: Կոր ժամանակներու մէջ այսպիսի մի վարչական եղանակի երկու օրինակ միայն տեսած եմք: Մին մահմետական երկիրներու մէջ, միւսն հին պապական դաւառներու մէջ, երբ աշխարհական իշխանութիւնն տակաւին չէր վերցուած: Պէտք է սակաւն ըսել որ պապական աշխարհային կառավարութիւնը խիստ փոքր մի երկրի վրայ կը տարածուէր, մինչդեռ իսլամութիւնը մեր երկրագունտի ընդարձակ մասերու վրայ կը ծանրանայ և անդ՝ յառաջադիմութեան ամենէն ներհակ գաղափարն տիրապետել կը տայ, այն է մի իշխանութիւն որ կարծեցեալ մի յարօնութեան վրայ հիմնեալ է և ուր վարդապետութիւնն ընկերութեան կառավարողն է:

Այն ազատականք որք ղիսլամը կը պաշտպանեն՝ չեն ճանաչեր զայն: Իսլամութիւնն հոգևորին և աշխարհականին անգատանելի միութիւնն է: Սա մի վարդապետութեան տիրապետութիւնն է: Սա մարդկային ազգին ՚ի սկզբանէ անտի կրած ամեն շղթայներէն ծանրագոյնն է: Միջին դարու առաջին կէսի մէջ, զարձեալ կ'ըսեմ, իսլամն իմաստասիրութեան տոկաց, վասն զի չկարողացաւ արդիւնել զայն: Չկարողացաւ զայն արդիւնել վասն զի յարակցութիւն չունէր նա և ոչ ըստ բաւականի կազմակերպեալ էր ահ ու սարսափ ազդելու համար: Ոտոնականութիւնը քրիստոնէից ձեռքն էր որք գլխաւորապէս Ալիականաց փորձերն ՚ի գերե

հանելու զբաղած էին: Զատ բաներ այս թույլ ուռկանի աչքերուն միջէն կ'անցնէին, Բայց երբ իսլամն իր իշխանութեան ներքեւ ջերմ հաւատացելոց ամբոխներ ունեցաւ, ամենայն ինչ հեղձամազ ըրաւ: Կրօնական սարսափն և կեղծաւորութիւնն օրակարգն անցան: Իսլամն ազատական եղած է երբ տկար է, և բռնական երբ զօրաւոր է: Պէտք չէ ուրեմն որ զիտութեան և իմաստասիրութեան պաշտպանը զայն համարելու պատիւն ընենք իրեն, զի սոքա արդիւնելու անկարող միայն եղած է նա: Քիտութեան և իմաստասիրութեան զարգանալուն պատիւն իսլամին տալ, զորս սա չկարողացաւ սկիզբէն ոչնչացնել, նոյնն է այժմու զիտութեան ըրած զիւտերուն պատիւը աստուածաբանաց վերագրել: Այդ գիւտերն տեղի ունեցել են աստուածաբանաց կամքին հակառակ: Արեւմտեան աստուածաբանութիւնը մահմետական աստուածաբանութենէն նուազ հալածիչ չէ եղել, միայն թէ առաջինը չչաջողեցաւ, չկարողացաւ նոր ոգին ջախջախել, ինչպէս իսլամութիւնը ջախջախեց իւր տիրապետած երկիրներուն ոգին: Մեր Արեւմտքի մէջ, աստուածաբանական հարածուճը, մի երկրի մէջ միայն, Սպանիոյ մէջ, յաջողութիւն գտաւ: Այնտեղ մի սոսկալի ճնշական գրութիւն զիտական ոգին խեղդեց: Փութամք յաւելցնել որ այդ ազնիւ երկիրն յապագային իր տրիտուրն պիտի վճարէ: Իսլամ երկիրներու մէջ պատահեցան ինչ որ կարելի էր պատահիլ յԵւրոպա եթէ հաւատաքննութիւնն, Փիլիպպոս Բ. և Պիոս Ե. յաջողէին մարդկային միտքը կասեցնելու համար ունեցած գիտումնին կատարել: Ուղիղն խօսելով, զժուար է ինձ երախտապարտ մնալ մի մարդու որ չէ կարողացած որոշած չարիքն ՚ի գործ դնել: Ահ, կրօնքներն իրենց վէհ և գեղեցիկ ժամերն ունին, երբ մեր խեղճ մարդկային ազ-

գին տկար մասերն կը մխիթարեն և կը բարձրացնեն: Բայց պէտք չէ շնորհաւորել զայնս այն եղելութեանց համար որք իրենց կամաց հակառակ ծնունդ առած են և զորս խափանել աշխատած են: Մտրդս իր սպաննածին ժառանգութենէն բաժին չառնուր և պէտք չէ որ հալածողք իրենց հալածած բաներէն շահ ստանան:

Այս կերպ կը վարուին սակայն նոքա որք իսլամին ազդեցութեան կը վերագրեն մի շարժում որ իսլամի կամացն հակառակ, իսլամի դէմ տեղի ունեցած է և զոր իսլամն բարեբաղդաբար չէ կարողացած արգելուլ. Ավիսէն, Ավէ-գօարն և Ավէրօէնս պատիւ համարել իսլամութեան, նոյնն է եթէ Կալիլէոսն կաթողիկոսութեան պատուաբեր համարեն: Աստուածաբանութիւնը նեղեց զԿալիլէոս, բայց բաւական ոյժ չունեցաւ կասեցնելու համար զայն: Սա մի պատճառ չէ որ իր այս անկարողութեանը համար յոյժ երախտապարտ լինիմք նմա: Բնաւ չեմ ուզեր որ և է հաւատոյ հանգանակն դառն խօսքերով դատաքննել, զի սոցա մէջ մարդկային խիղճն իսղաղութիւն որոնած է այն ամեն անլուծանելի առեղծուածոց մէջ զորս կը ներկայեն իրեն տիեզերքն և ճակատադիրն: Մահմետականութիւնը իբրև կրօնք գեղեցիկ կողմեր ունի, և ես երբէք մի մղկիթ չեմ մտած առանց սաստկապէս լուզուելու, և ներեցէք ինձ ըսել, առանց փոքր ինչ ցաւելու որ մահմետական չեմ: Բայց մարդկային բանավարութեան համար մահմետականութիւնը միշտ վնասաւոր եղած է: Այն մտքերն որ լոյսին առաջ փակեց, անշուշտ իրենց ներքին սահմաններովն նորա առաջ փակուած էին արդէն, բայց նա ազատախոհութիւնն հալածեց, չեմ ըսեր միւս կրօնական դրութիւններէ առաւել, բայց աւելի ազդուապէս: Նա իւր տիրապե-

տած երկիրներն մի դաշտ ըրաւ մտաց բանաւոր մշակութեան համար փակուած:

Արդարև, մահմետականին իսկապէս որոշիչ յատկութիւնն այն է՝ որ նա գիտութեան դէմ ռի կը կրէ: Նա համոզուած է թէ հետազօտութիւնն անօգուտ, անտոյի, գրեթէ ամբարիշտ մի բան է: Կ'ատէ բնութեան հմտութիւնը, վասն զի Աստուծոյ դէմ մի մրցում է կ'ըսէ: Կ'ատէ պատմական գիտութիւնը, վասն զի անցեալ ժամանակներու վերաբերելով կ'երկնչի որ մի գուցէ վաղեմի սխալանքները վերստին կենդանանան: Այս մասին ամենէն հետաքրքրական վկայութիւնն, Չէյխ Բիֆաի վկայութիւնն է որ իբր Եղիպտական դպրոցին իմամ երկար ատեն Բարիզ բնակած է: Սա յԵղիպտոս դարձին, Փրանսայի բնկերութեան վրայ մի գործ հրատարակած է լի հետաքրքրաշարժ գիտողութիւններով: Նորա սևեռեալ գաղափարն այն է թէ եւրոպական գիտութիւնը, մանաւանդ իր այն սկզբունքի մէջ թէ բնական օրէնք անխախտելի են, ծայրէ 'ի ծայր մի հերետիկոսութիւն է, և պէտքէ ըսել, թէ մահմետականի տեսակէտով, ըստ բաւականի իրաւունք ունի այսպէս խօսելու: Մի վարդապետութիւն որ յայտնութեան վրայ հիմնուած է միշտ ազատ հետազօտութեան դէմ է, զի սա կարող է նմա հակառակարանել: Գիտութեան հետեւանքն չէ թէ արտաքսել է գաստուածայինն, այլ միշտ հեռացնել զայն մասնաւոր եղելութեանց միջավայրէն ուր նորա ներկայութիւնը կը կարծէին տեսնել: Արդ՝ գերբնականը ամեն աստուածաբանութեան հիմն է: Իսլամն երբ գիտութեան հետ իբր թշնամի կը վարուի՝ իր սկզբունքին միայն կը հետևի, սակայն շատ հետեւական լինիլն վտանգաւոր մի բան է: Իսլամն յաջողեցաւ և աղէտք գտաւ: Գիտութիւնն սպաննելով, նա ինքզինքը սպաննեց և աշխարհիս մէջ

իւր անձը կատարեալ ստորութեան դատապարտեց:

Երբ մարդս այն գաղափարով ճանապարհ կ'ելնէ թէ Հետադատութիւնը Աստուածային իրաւանց Հակառակ մի բան է, անձողապրելի կերպով մտաց դանդաղութեան, ճշգրտութեան չգոյութեան, և բացորոշ լինելու անկարողութեան կը հանգի: Այլ է (Աստուած գիտէ), այս է ահա ամեն վիճաբանող մահմետականի վերջին հնչած բառը: Պ. Լայարդ, մի լուսամբտ անձ, Մօսկոյ բնակելուն առաջին ժամանակներն փափագած է քաղաքին բնակչաց վրայ ստույգ տեղեկութիւններ ստանալ. նոյնպէս և նորա վաճառականութեան և պատմական ասանդութեանց վրայ: Այս գիտմամբ Քատրին գիմելով Հետեւեալ պատասխանն ստացած է, որ մի բարեկամ բարեհաճեցաւ թարգմանել ինձ:

«Ո՛վ իմ ականաւոր բարեկամս,

նով բերկրութիւն մարդկանց:

Ինչ որ կը հարցանես ինձ միանգամայն անօգուտ և վտանգաւոր է: Թէպէտ իմ բոլոր օրերն այս քաղաքի մէջ անցած են, սակայն երբէք չեմ մտածել անգամ սորա տուներն հաշուելու, և ոչ իսկ տեղեկանալու թէ ո՞րքան բնակիչ ունի: Իսկ գալով գիտնալու թէ այս ինչն ո՞րքան վաճառք կը բեռցնէ իր ջորիներու վրայ, այն ինչն իր նաւակին մէջ, դոքա բնաւ երբէք ինձ չեն վերաբերիր: Իսկ քաղաքիս նախկին եղելութեանց վրայ՝ Աստուած միայն տեղեակ է: Նա միայն կարող է ըսել թէ սորա բնակիչք որքան մոլորութեանց մէջ թաթաւած են իսլամութեան յաղթանակէն առաջ: Սոցա ծանօթանալու փափագն մեզ համար վտանգաւոր է:

«Ո՛ր բարեկամդ իմ, ո՞ր իմ գառնուկ, մի աշխատիր ճանաչել ինչ որ քեզ չվերաբերիր: Գու մեր մէջ եկար, և մենք քոյ գալուստն սիրով ողջունեցինք: Երթ ՚ի խաղաղութիւն:

Աշմարիտ ըսեմ քեզ, քու առ իս ուղղած խօսքերն չվիրաւորեցին զիս, վասն զի այլ է խօսողն, այլ է ունկնդրողն: Քու ազգիդ մարդոց սովորութեան համեմատ, դու շատ տեղեր շրջագայեցար, և ոչ մի տեղ կարողացար երջանկութիւնը գտնել: Մեք (Օրհնեալ է Աստուած) այս տեղ ծնած եմք և բնաւ փափագ չունինք աստի մեկնելու:

«Լուր ինձ, որդեակ իմ, չկայ մի իմաստութիւն որ Աստուծոյ ճանաչմանը հաւասարի: Նա է որ ստեղծեց զաշխարհ: Վայել է մեզ որ ջանանք նմա հաւասարիլ աշխատելով արարչութեան զաղտնեաց թափանցել: Տես սա աստղն, որ վերև սա աստղին շուրջը կը գառնայ: Տես նաև սա գիսաւորն որու այնքան երկար տարիներ պէտք են մեզ մօտենալու նոյնպէս և հեռանալու: Թո՛ղ զայն, որդեակ իմ, Նա որ իւր ձեռօքը ստեղծեց զայն, գիտէ նաև նմա առաջնորդել:


«Սակայն դուցէ ըսես ինձ. «նով մարդ, մի կողմ դնայ, վասն զի ես քան զքեզ գիտուն եմ, և այնպիսի բաներ տեսած եմ որ դու կ'անգիտանաս:» Եթէ կը կարծես թէ քոյ տեսածներն զքեզ քան զիս լաւագոյն ըրին, թող կրկնապէս բարի լինի քոյ գալուստ: Բայց ես կ'օրհնեմ զԱստուած որ ինձ պիտանի չեղածն չեմ որոներ: Գու ուսած ես այն բաներ որք զիս չեն Հետաքրքրեր, և ինչ որ տեսած ես դու՝ կ'արհամարհեմ ես: Եթէ դու աւելի գիտութիւն ունենաս, այդ գիտութիւնը պիտի կարենանք երկու ստամոքս տալ քեզ, և այն աչերդ, որով ամեն կողմ խողարկել կը գնաս, պիտի արքայութիւնը գտնել տանք քեզ:

«Ո՛ր բարեկամդ իմ, «Աստուած միայն կայ» գոչէ, եթէ երջանիկ լինիլ կ'ուզես: Չարիք մի գործեր, և այն ժամանակ ոչ մարդերէ և ոչ մահուանէ կ'երկնչես, վասն զի քոյ ևս ժամը պիտի հասնի»:

Այդ քատրն իր տեսակէտովն շատ իմաստասէր է, բայց տեսէք ինչ տարրերութեամբ: Մեք այդ քատրին նամակն իսխատ գեղեցիկ կը գտնենք, իսկ ինքն եթէ մեր այստեղ խօսածներն լսէ զարշելի կը գտնէ զայնս: Բացի այդ, այս նման մի ոգւոյ հետեւանքներն մի ընկերութեան համար աղետաբեր են: Գիտական ոգւոյ չզոյութիւնն երկու հետեւանք յառաջ կը բերէ, աւելորդապաշտութիւնն և վարդապետականութիւնը: Սոցանէ երկրորդն առաջինէն վատթարագոյն է թերևս: Արևելքն աւելորդապաշտ չէ, նորա մեծագոյն աղէտն սեղմեալ վարդապետականութիւնն է որ կը բռնանայ ամբողջ ընկերութեան վրայ: Մարդկային ազգի նպատակն հլու տգիտութեան մէջ անշարժութիւնը չէ, այլ անողոք պատերազմն է ընդդէմ ստութեան, պաշքարն է ընդդէմ չարին:

Գիտութիւնը մի ընկերութեան հոգին է, վասն զի գիտութիւնն բանավարութիւնն է: Նա է որ գինուորական, ճարտարարուեստական գերագանցութիւնը կ'ստեղծէ: Նա է որ մի օր ընկերական գերագանցութիւնը պիտի ստեղծէ, այն է ընկերական այն վիճակ՝ ուր արդարութեան քանակութիւնն համապատասխան պիտի լինի տիեզերաց լսկութեան: Գիտութիւնն զոյժը բանավարութեան սնկասարար կ'ընէ: Ասիոյ մէջ բարբարոս տարերք կան այժմ, յար և նման են ճիշտ այն տարերջ՝ որք մահմետականաց առաջին բանակներն, Ատիլաի և Աինկիզ-խանի կիկոնները կազմեցին, բայց գիտութիւնն նոցա ճանապարհը կը խափանէ: Սթէ Իօմէր, եթէ Աինկիզ-խան իրենց առաջն մի լաւ հրետանիի հանդիպէին, իրենց անապատի սահմաններն չպիտի կարողանային անցնիլ: Պէտք չէ որ ժամանակաւոր վրիպանաց առաջ կասի մարդ: Ի՞նչեր չըսին, ՚ի սկզբան, հրապին գէնքերու դէմ,

որք սակայն քաղաքակրթութեան յաղթանակին կարի իմն նպաստեցին: Ինձ զարով, ես համոզուած եմ թէ գիտութիւնը լաւ է, թէ նա միայն կը զինէ զմարդ այն չարութեան դէմ որ նորա օգնութեամբ կարող է գործուիլ և թէ հուսկ յետոյ նա յառաջադիմութեան միայն պիտի օժանդակէ, կամ ըսել ճշմարիտ յառաջադիմութեան, որ մարդուս արժանավայել յարգանքէն և ազատութենէն անբաժանելի է:



4928

2013

«Ազգային գրադարան»



NL0031905

